Արմավիրի մարզի Զարթոնք
համայնքի ղեկավարի առաջին
կիսամյակի գործունեության հաշվետվություն
(2011թ-ի. հունվար-հունիս ամիսների)

## Քաղաքացիների իրավունքների պաշտպանության բնագավառում

2011թ. հունվար-հունիս ամիսների ընթացքում բանավոր և գրավոր գյուղապետարան է դիմել համայնքի թվով 180 բնակիչ, որից 15-ը գրավոր: Դիմումատուների հարցերին տրվել է լիարժեք պատասխան: Ստացվել և առաքվել է թվով 156 շրջաբերական: Գյուղապետարանը նոտարական գրասենյակում , Ք.Կ.Ա.Գ.-ի բաժնում, անձնագրային բաժնում, կադաստրի տարածքային ստորաբաժնում բանավոր և գրավոր 125 անգամ միջնորդությամբ հանդես է եկել համայնքի բնակիչների օրինական շահերը պաշտպանելու նպատակով:

Կայացել է համայնքի ավագանու 3 հերթական և 1 արտահերթ նիստ, որոնք ներկայացվել են մարզպետարան: Գյուղապետի կողմից կայացվել է 12 որոշում և արձակաց 4 կարգադրություն, որոնք նույնպես ներկայացվել են մարզպետարան:

Համայնքում անցկացվել է ապրիլի 7-ի և մայիսի 28-ի կապակցությամբ միջոցառումներ, որի ժամանակ բաժանվել են հուշանվերներ:

## Ֆինանսների բնագավառում

Օրենքով սահմանված կարգով ապահովել և տնօրինել է համայնքի բյուջեի մուտքերը և նպատակային օգտագործումը: Հաշվետու ժամանակահատվածում հավաքագրվել և մուտքագրվել է գույքահարկի մասով 334700 դրամ, հողի հարկի մասով 1632200 դրամ, տեղական տուրքերի մասով 100000 դրամ և վարձակալական հողի մասով 435600 դրամ: Գյուղապետարանը աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձերի, սոց.վճարների և եկամտահարկերի գծով հաշվետու ժամանակաշրջանում ոչ մի պարտք չունի: Օրինականացվել և օտարվել է ապորինի կառուցված շինություն, ինչի արդյունքում բյուջե է մուտք արվել 581,28 հազար դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում սեփական մուտքերի մասով բյուջեն կատարվել է հողի հարկի մասով 85,9 %, գույքահարկի մասով 54,7 %, վարձակալական հողերի մասով 50,7 % և տեղական տուրքերի մասով 100 %:

## Պաշտպանության բնագավառում

Գյուղապետարանը տարածքային զինկոմիսարյատից գարնանային զինակոչի համար ստացած ծանուցագրերը ժամանակին բաժանվել է հասցեատերերին և հետևել է, որ ժամանակին ներկայանան զինկոմիսարյատ: Զին ծառայությունից խուսափողների թիվը հասցվել է զրոյի, նախկինում զինծառայությունից խուսափողներից մեկը հայտնաբերվել և զինկոմիսարյատ է ներկայացվել, որը այժմ ծառայում է ՀՀ բանակում, վերոնշված աշխատանքները կրելու են շարունակական բնույթ:

Աջակցվում և ուշադրության կենտրոնում են պահվում պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծումը: Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի տարելիցի

կապակցությամբ պատերազմի վետերանին հատկացվել է 20.0 հազար դրամ և կազմակերպվել է մեծ միջոցառում, որին մասնակցել է համայնքի ողջ ազգաբնակչությունը:

Աշխատանքներ են տարվում երիտասարդության շրջանում ռազմահայրենասիրական դաստիարակության գործում: Համայնքի թվով չորս զինապարտներին տրվել է ֆինանսական օգնություն:

## Քաղաքաշինության և հողօգտագործման բնագավառում

Անմիջական վերահսկողություն է սահմանվում համայնքի հողօգտագործողների նկատմամբ տարածքները նպատակային օգտագործման ուղղությամբ: Մասնագետների մասնակցությամբ տրվում է անվճար խորհրդատվություն բույսերի պաշտպանության հարցում: Համայնք են հրավիրվել „ԳԱՄԿ„-ի մասնագետները, որոնք նույնպես անցկացրել են անվճար սեմինարներ և խորհրդատվություններ, օրինականացվել է մեկ ապորինի կառուցված շինություն:

## Կոմունալ տնտեսության և բարեկարգման բնագավառում

Համայնքում կատարվում է ամենօրյա աղբահեռացում, որի համար կնքվել է աշխատանքային պայմանագիր մեխանիզատորի հետ: Կնքվել է պայմանագիր սանիպիտ կայանի հետ խմելաջրի որակի աղտորոշման նպատակով, որի համար հատկացվել է 100,0 հազար դրամ: Խիստ հսկողություն է սահմանվել գյուղապետի կողմից խմելաջրի խողովակաշարի վրա կատարված վթարների և նրանց վերացնելու ուղղությամբ, որի վերաբերյալ կայացվել է գյուղապետի համապատասխան որոշումներ: Գնվել և տեղադրվել է մեկ կենտրոնախույզ պոմպ 350000 դրամ արժողությամբ: Համայնքում կատարվում է խմելաջրի վթարային ջրագծի մոտ 2250 մետր խողովակների փոխանակման աշխատանքներ, որի համար համայնքի բյուջեից խողովակների և կցամասերի ձեռք բերման համար հատկացվել է 2880,8 հազար դրամ, իսկ աշխատանքների իրականացման համար 7502,5 հազար դրամ: Խմելաջրի ջրագծի փոխանակման համար գյուղապետարանը ներ է դրել 10385,3 հազար դրամ ինչպես նաև 360,0 հազար դրամ նախագծա նախահաշվային աշխատանքներ կատարելու համար: Ամեն մի տնտեսությանը տրվել է առանձին ջրագիծ: Կատարվել է գյուղապետարանի շենքի վերանորոգում, ձեռք է բերվել դռներ, պատուհաններ և գույք, ինչի համար հատկացվել է 1,659,8 հազար դրամ, իսկ աշխատանքները կատարվել են գյուղապետարանի աշխատակազմի ուժերով:

## Տրանսպորտի բնագավառում

Գյուղապետարանի կողմից նախատեսնվել է 1000,0 հազար դրամի մասնակի ավազապատման և հարթեցման աշխատանքներ:

## Առևտրի և սպասարկման բնագավառում

Արգելվել է փողոցային առևտուրը:
Հսկողություն է սահմանվել արագ փչացող, ժամկետանց սննդի և առևտրային կանոնների խախտման նկատմամբ, ինչի մասին կիսամյակային տեղեկատվություն է ներկայացվում մարզպետարան:
Բացառվել է փողոցային վառելանյութի վաճառքը:

## Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում

Համայնքում ծնելիությունը բարձրացնելու նպատակով համայնքի ավագանու որոշմամբ նորածին երեխա ունեցող ընտանիքներին հաշվետու ժամանակահատվածում նախատեսվել է 200.0 հազար դրամ. յուրաքանչյուրին՝ 20.0 հազարական դրամ, որպես սոց. օգնություն: Դպրոց չհաճախող երկու երեխաների ծնողների հետ տարվել է բացատրական աշխատանքներ, որից հետո նրանք հաճախել են դպրոց: Գյուղապետարանը համայնքի ավագանու որոշմամբ համայնքի չորս ուսանողներին որպես ուսման վարձ է տրամադրել 590,0 հազար դրամ: Համայնքի դպրոցի շենքի լուսամուտների փոխանակման համար նախատեսնվել է մեկ միլիոն դրամ: Համայնքի գրադարանի համար ձեռք են բերվել նոր գրքեր:

## Առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և սոցիալական ծառայության բնագավառում

Բուժ անձնակազմի և գյուղապետարանի մասնակցությամբ հսկողություն է սահմանվել խմելաջրի վթարների, խորքային հորերի քլորացման և կենցաղային աղբի հեռացման հարցում: Համաճարակների կանխարգելման նպատակով կատարվում է ամենօրյա բակայցեր և տարվում բացատրական աշխատանքներ: Համայնքում հրավիրվում են բժիշկ մասնագետներ ազգաբնակչությանը անվճար ստուգելու, համապատասխան անվճար բուժումներ և խորհուրդներ տալու նպատակով: Համայնքում կազմակերպվում է ֆուտբոլի մրցումներ: Գյուղապետարանի միջոցներից սպորտային համազգեստների և գնդակների ձեռք բերման համար տրամադրվել է 400,0 հազար դրամ: Համայնքից թվով վեց ֆուտբոլիստ մասնակցում են մարզի առաջնության խաղերին: Համայնքի թվով 10 սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է ֆինանսական օգնություն:

## Գյուղատնտեսության բնագավառում

Աշխատակազմի միջոցով կազմակերպվել և վիճակագրական վարչություն է ներկայացվել համայնքում անասնագլխաքանակի հաշվառման ամենամյա աշխատանքներ:

Տարածքային վիճակագրական վարչություն է ներկայացվել հունիսյան ցանքաշրջանառության ինչպես նաև առկա գյուղտեխնիկայի հաշվետվություններ:

Համայնքում համաձայն գրաֆիկի կազմակերպվում է անասունների և թռչունների հակահամաճարակային պատվաստումներ: Ավարտին է հասցվել համայնքի ոռոգման ջրագծի 1,850 կմ նոր կիսախողովակների անցկացման աշխատանքները, գումարի 15%-ի ներդրումը կատարվել է գյուղապետարանի կողմից որը կազմում է 3,598,140 դրամ:

## Համայնքի առկա հիմնախնդիրները

1. Մանկապարտեզի շենքի վերանորոգում:
2. Խմելաջրի ցանցի մոտ 1.5 կմ խողովակաշարի փոխանակում նորով:
3. Կուլտուրայի տան հիմնովի վերանորոգում:
4. Գ-յուղամիջյան փողոցների ասֆալտապատում 3 կմ
5. Աղակալված հողերի աղազերծում 150 հա
6. Նոր դրենաժային ցանցի անցկացում 4.5 կմ

Զարթոնքի գյուղապետ՝ Պ.ՍԱՐԳՍՅԱՆ